Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
հուլիսի 26-ի N 937 -Ն որոշման

# Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի   Ձ Ե Վ
## ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

______________________________________________________________________________

(ստուգում իրականացնող պետական մարմնի լրիվ անվանումը՝ ներառյալ ստորաբաժանման անվանումը)

ԿՈՂՄԻՑ 20      ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության

______________________________________________________________________________

(ստուգում իրականացնող պետական մարմնի լրիվ անվանումը)

կողմից 20-- թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել թվով __________(քանակը) ստուգումներ, որոնցից՝ __________ (քանակը)՝ բարձր ռիսկայնությամբ, __________ (քանակը)՝ միջին ռիսկայնությամբ և __________ (քանակը)՝ ցածր ռիսկայնությամբ տնտեսավարող սուբյեկտների մոտ:

| NN ը/կ | Տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում) | | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Գտնվելու վայրը | Վերջին ստուգման ավարտի ամսաթիվը | Ռիսկայնու-թյունը | Ստուգման ժամանակա-հատվածը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմա-կերպա-կան-իրավա-կան ձևը | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ                                        Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

12_0937

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
հուլիսի 26 -ի N 937 -Ն որոշման

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Ստուգում իրականացնող մարմնի կողմից հաջորդ տարվա ընթացքում իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագիրը վերջինիս պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվում է օրենքի 2.1-ին հոդվածի 6-րդ մասին համապատասխան` մինչև ստուգումներին նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը` Մայքրոսոֆթ Օֆիս Էքսել (Microsoft Office Excel) ձևաչափով:

2. Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկվում են այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք ենթակա են ստուգման ստուգում իրականացնող մարմնի կողմից:

3. Ստուգում իրականացնող մարմինն իր լրիվ անվանումը գրանցելիս նշում է նաև համապատասխան ստորաբաժանման անվանումը, եթե ստուգումներն իրականացվում են առանձնացված ստորաբաժանման (տեսչության կամ ծառայության) միջոցով:

4. Ստուգումների տարեկան ծրագիրը լրացվում է հետևյալ կարգով`

1) 1-ին սյունակում գրանցվում է հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրանցվում է տնտեսավարող սուբյեկտի անվանումը կամ անունը, ազգանունը (անվանումները գրանցվում են առանց չակերտների և անվանման բոլոր տառերը գրանցվում են մեծատառով).

3) 3-րդ սյունակում գրանցվում է տնտեսավարող սուբյեկտի կազմակերպական-իրավական ձևը` հապավումներով.

4) 4-րդ սյունակում գրանցվում է տնտեսավարող սուբյեկտի պետական գրանցման կամ հաշվառման համարը .

5) 5-րդ սյունակում գրանցվում է տվյալ տնտեսավարող սուբյեկտի հարկ վճարողի հաշվառման համարը.

6) 6-րդ սյունակում նշվում է տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը.

7) 7-րդ սյունակում նշվում է տնտեսավարող սուբյեկտի մոտ անցկացված պլանով նախատեսված վերջին ստուգման փաստացի ավարտի ամսաթիվը հետևյալ ձևաչափով՝ օրը, ամիսը, տարեթիվը.

8) 8-րդ սյունակում գրանցվում է տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության աստիճանը՝ բարձր, միջին կամ ցածր.

9) 9-րդ սյունակում գրանցվում է տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգում իրակա-նացնելու ժամանակահատվածը՝ եռամսյակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ